

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ՝

2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ
ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Շվեյցարիայի Դաշնային խորհուրդը (այսուհետ՝ Պայմանավորվող պետություններ),

ցանկանալով կնքել 2006 թվականի հունիսի 12-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին» կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա) փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրություն,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կոնվենցիայի նախաբանը հանել և փոխարինել հետևյալով.

«Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Շվեյցարիայի Դաշնային խորհուրդը,

ցանկանալով զարգացնել և ամրապնդել երկու պետությունների միջև տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցությունը և այս նպատակով կնքել եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին Կոնվենցիա,

նպատակ ունենալով վերացնելու եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը՝ առանց հարկերի վճարումից խուսափելու կամ դրանք շրջանցելու միջոցով (այդ թվում՝ հարկային համաձայնագրերով նախատեսված արտոնյալ դրույթների շահարկման միջոցով երրորդ պետությունների ռեզիդենտների կողմից սույն Կոնվենցիայով նախատեսված հարկերի ազատումից անուղղակիորեն օգտվելու միջոցով) հարկային պարտավորությունների կատարումից ազատվելու կամ արտոնյալ հարկման հնարավորություններ ստեղծելու,

համաձայնեցին հետևյալի մասին.»:

ՀՈԴՎԱԾ 2

Կոնվենցիայի 1-ին հոդվածը («Ընդգրկված անձինք») լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ կետով.

«2. Սույն Կոնվենցիայի նպատակներով՝ եկամուտը, որը ստացվել է որևէ միավորման կամ կազմակերպության կողմից կամ միջոցով, որը երկու Պայմանավորվող պետությունների հարկային օրենսդրությամբ ամբողջովին կամ մասնակիորեն դիտարկվում է որպես հարկային տեսանկյունից թափանցիկ, համարվում է Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամուտ, սակայն միայն այնքանով, որքանով այդ եկամուտն այդ Պետության կողմից հարկման նպատակներով համարվում է որպես այդ Պետության ռեզիդենտի եկամուտ: Սույն կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ որևէ կերպ սահմանափակեն Պայմանավորվող պետության՝ այդ Պետության ռեզիդենտներին հարկելու իրավունքը:»:

ՀՈԴՎԱԾ 3

2-րդ հոդվածի («Ընդգրկված հարկեր») 3-րդ կետի «ա» ենթակետի iv դրույթը հանել:

ՀՈԴՎԱԾ 4

1. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի («Ընդհանուր սահմանումներ») 1-ին կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն, իսկ աշխարհագրական իմաստով կիրառվելու դեպքում նշանակում է՝ այն տարածքը, այդ թվում՝ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավազորությունը՝ ազգային օրենսդրությանն ու միջազգային իրավունքին համապատասխան,»:

2. 3-րդ հոդվածի առաջին կետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) «Շվեյցարիա» տերմինը նշանակում է Շվեյցարիայի Համադաշնության տարածքը՝ ինչպես սահմանված է միջազգային իրավունքին համապատասխանող իր օրենքներով,»

3. 3-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ը) իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ Ֆինանսների նախարարը և Պետական եկամուտների կոմիտեի նախագահը կամ նրանց լիազորված ներկայացուցիչները.

ii) Շվեյցարիայի դեպքում՝ Ֆինանսների դաշնային վարչության պետը կամ նրա լիազորված ներկայացուցիչը,»:

4. 3-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ժ» ենթակետով.

«ժ) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինն ընդգրկում է անկախ բնույթի մասնագիտական ծառայությունների և այլ գործունեության իրականացումը,»:

5. 3-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ժա» ենթակետով.

«ժա) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ,»:

6. 3-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ժբ» ենթակետով.

«ժբ) Պետության «կենսաթոշակային հիմնադրամ» տերմինը նշանակում է՝ Պայմանավորվող պետությունում հիմնված միավորում կամ կազմակերպություն, որն այդ Պետության հարկային օրենսդրությամբ դիտարկվում է որպես առանձին անձ, և՛

i) որը կազմված է և գործում է բացառապես կառավարելու կամ անհատներին կենսաթոշակային կամ նմանատիպ նպաստներ տրամադրելու նպատակով, և որը, որպես այդպիսին, կարգավորվում է այդ Պետության կամ դրա քաղաքական միավորներից մեկի կողմից, կամ

ii) որը կազմված է և գործում է բացառապես կամ գրեթե բացառապես «i» դրույթում նշված միավորումների կամ կազմակերպությունների օգտին ֆինանսական միջոցներ ներդնելու նպատակով:»:

ՀՈԴՎԱԾ 5

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի («Մշտական հաստատություն») 3-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«3. Շինարարական հրապարակը, կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկման գործունեությունը համարվում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ նման հրապարակի, ծրագրի կամ գործունեության տևողությունը գերազանցում է ինն ամիսը:»:

ՀՈԴՎԱԾ 6

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի («Եկամուտ անշարժ գույքից») 4-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:»:

ՀՈԴՎԱԾ 7

1. Կոնվենցիայի 7-րդ հոդվածի («Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից») գործող 7-րդ կետը վերահամարակալել որպես 8-րդ կետ:

2. Կոնվենցիայի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ կետով.

«7. Պայմանավորվող պետությունը որևէ ճշգրտում չի կատարում Պայմանավորվող պետություններից մեկի ձեռնարկության մշտական հաստատությանը վերագրելի շահույթի առնչությամբ հարկային այն տարվա ավարտից հինգ տարի հետո, երբ շահույթը վերագրելի կլինի մշտական հաստատությանը: Սույն կետի դրույթները չեն կիրառվում խաբեության կամ պարտավորությունների դիտավորյալ չկատարման դեպքում:»:

ՀՈԴՎԱԾ 8

1. Կոնվենցիայի 9-րդ հոդվածի («Ասոցիացված ձեռնարկություններ») 2-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունն այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում է (և, հետևաբար, հարկում) շահույթի այն չափը, որի մասով մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունն

արդեն ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդպիսով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջին նշված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև առկա պայմանները լինեին այնպիսի պայմաններ, որոնք կլինեին անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս Պետությունը այդ շահույթի առնչությամբ կատարում է այնտեղ գանձված հարկի գումարի չափով համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, և, անհրաժեշտության դեպքում, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները խորհրդակցում են միմյանց հետ:»:

ՀՈՂՎԱԾ 9

1. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի («Շահաբաժիններ») 2-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենսդրության համաձայն. բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդպես գանձված հարկը չպետք է գերազանցի՝

ա) շահաբաժինների համախառն գումարի 0 տոկոսը, եթե փաստացի սեփականատեր է հանդիսանում այն ընկերությունը, որը 365 օր՝ ներառյալ շահաբաժինը վճարելու օրը (այդ ժամկետը հաշվելու նպատակով հաշվի չեն առնվում սեփականության այնպիսի փոփոխությունները, որոնք ուղղակիորեն կարող են ի հայտ գալ այն ընկերության միաձուլման կամ բաժանման ձևով վերակազմակերպման արդյունքում կամ իրավական ձևի փոփոխման արդյունքում, որը տնօրինում է բաժնետոմսերը, կամ որը վճարում է շահաբաժինը), ուղղակիորեն տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի առնվազն 50 տոկոսը և շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալում շահաբաժիններ վճարելու օրվա դրությամբ կատարել է ավելի քան երկու միլիոն (2 000 000) շվեյցարական ֆրանկի կամ ցանկացած այլ արժույթով դրան համարժեք գումարի չափով ներդրում,

բ) շահաբաժինների համախառն գումարի 0 տոկոսը, եթե փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության կենսաթոշակային հիմնադրամ է, կամ կենտրոնական բանկն է,

գ) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատեր է հանդիսանում այն ընկերությունը, որը 365 օր՝ ներառյալ շահաբաժինը վճարելու օրը (այդ ժամկետը հաշվելու նպատակով հաշվի չեն առնվում սեփականության այնպիսի փոփոխությունները, որոնք ուղղակիորեն կարող են ի հայտ գալ այն ընկերության միաձուլման կամ բաժանման ձևով վերակազմակերպման արդյունքում կամ իրավական ձևի փոփոխման

արդյունքում, որը տնօրինում է բաժնետոմսերը, կամ որը վճարում է շահաբաժինը), ուղղակիորեն տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի առնվազն 10 տոկոսը և շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալում շահաբաժիններ վճարելու օրվա դրությամբ կատարել է ավելի քան հարյուր հազար (100 000) շվեյցարական ֆրանկի կամ ցանկացած այլ արժույթով դրան համարժեք գումարի չափով ներդրում,

դ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ մնացած բոլոր դեպքերում:

3. 2-րդ կետը չի ազդում ընկերության հարկման վրա այն շահույթի մասով, որից վճարվում են շահաբաժինները: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն այդ սահմանափակումների կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:»:

2. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի գործող 3-րդ կետը վերահամարակալելի որպես 4-րդ կետ:

3. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի («Շահաբաժիններ») 4-րդ կետը հանել և փոխարինել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով.

«5. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը, և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի («Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից») դրույթները:»:

4. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի («Շահաբաժիններ») 5-րդ կետը հանել և փոխարինել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«6. Երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, ապա այդ մյուս Պետությունն ընկերության կողմից վճարված շահաբաժինները չի կարող ենթարկել որևէ հարկման՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, և չի կարող հարկման ենթարկել ընկերության չբաշխված շահույթը, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:»:

ՀՈԴՎԱԾ 10

1. Կոնվենցիայի 11-րդ հոդվածի («Տոկոսներ») 3-րդ կետը լրացնելի հետևյալ

բովանդակությամբ նոր՝ «գ» ենթակետով.

«գ) այդ մյուս Պետության կառավարությանը, նրա քաղաքական միավորին կամ տեղական իշխանությանը կամ այդ մյուս Պետության կենտրոնական բանկին:»:

2. Կոնվենցիայի 11-րդ հոդվածի («Տոկոսներ») 5-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի («Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից») դրույթները:»:

3. Կոնվենցիայի 11-րդ հոդվածի («Տոկոսներ») 6-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:»:

ՀՈԴՎԱԾ 11

1. Կոնվենցիայի 12-րդ հոդվածի («Ռոյալթի») 4-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ վճարվում է ռոյալթին, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի («Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից») դրույթները:»:

2. Կոնվենցիայի 12-րդ հոդվածի («Ռոյալթի») 5-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն երբ ռոյալթի վճարող անձը,

անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:»:

ՀՈԴՎԱԾ 12

1. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի («Գույքի արժեքի հավելաճ») 2-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը՝ ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ միասին) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:»:

ՀՈԴՎԱԾ 13

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը («Անկախ անհատական ծառայություններ») հանել:

ՀՈԴՎԱԾ 14

Կոնվենցիայի 15-րդ հոդվածի («Կախյալ անհատական ծառայություններ») վերնագիրը հանել և փոխարինել հետևյալով.

«ՀՈԴՎԱԾ 15

Վարձու աշխատանքից ստացված եկամուտ»:

ՀՈԴՎԱԾ 15

1. Կոնվենցիայի 17-րդ հոդվածի («Արտիստներ և մարզիկներ») վերնագիրը հանել և փոխարինել հետևյալով.

«ՀՈԴՎԱԾ 17

Արվեստի գործիչներ և մարզիկներ»:

2. Կոնվենցիայի 17-րդ հոդվածի («Արտիստներ և մարզիկներ») 1-ին կետը հանել և փոխարինել հետևյալով.

«1. Չնայած 15-րդ հոդվածի («Վարձու աշխատանքից ստացված եկամուտ») դրույթներին՝ այն եկամուտը, որը Պայմանավորվող պետության

ռեզիդենտն ստացել է որպես արվեստի գործիչ՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստ կամ երաժիշտ, կամ որպես մարզիկ մյուս Պայմանավորվող պետությունում իրականացրած իր անհատական գործունեությունից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:»:

3. Կոնվենցիայի 17-րդ հոդվածի («Արտիստներ և մարզիկներ») 2-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«2. Երբ արվեստի գործչի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անհատական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ («Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից») և 15-րդ («Վարձու աշխատանքից ստացված եկամուտ») հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը: Սույն կետը չի կիրառվում, եթե պարզվում է, որ ո՛չ արվեստի գործիչն ինքը կամ մարզիկն ինքը, ո՛չ էլ նրանց հետ կապված անձինք ուղղակիորեն մասնակցություն չունեն այդպիսի անձի շահույթում:»:

ՀՈԴՎԱԾ 16

Կոնվենցիայի 21-րդ հոդվածի («Այլ եկամուտ») 2-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի («Եկամուտ անշարժ գույքից») 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ վճարվել է եկամուտը, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի («Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից») դրույթները:»:

ՀՈԴՎԱԾ 17

Կոնվենցիայի 22-րդ հոդվածի («Գույք») 2-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«2. Պայմանավորվող պետության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած ձեռնարկության մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:»:

ՀՈԴՎԱԾ 18

Կոնվենցիայի 23-րդ հոդվածի («Կրկնակի հարկման բացառումը») 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ» ենթակետով.

«դ) 2-րդ կետի «ա» ենթակետի դրույթները չեն կիրառվում Շվեյցարիայի ռեզիդենտի ստացած եկամտի կամ գույքի նկատմամբ այն դեպքում, երբ Հայաստանն այդպիսի եկամուտը հարկումից ազատելու նպատակով կիրառում է սույն Կոնվենցիայի դրույթները կամ այդպիսի եկամտի նկատմամբ կիրառում է 10-րդ («Շահաբաժիններ»), 11-րդ («Տոկոսներ») կամ 12-րդ («Ռոյալթի») հոդվածների 2-րդ կետի դրույթները:»:

ՀՈԴՎԱԾ 19

Կոնվենցիայի 25-րդ հոդվածի («Փոխհամաձայնեցման ընթացակարգ») 2-րդ կետը հանել և փոխարինել հետևյալով.

«2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի, և եթե նա ինքնուրույն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա պետք է ձգտի գործը վճռել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած համաձայնություն իրականացվում է՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներպետական օրենսդրությամբ նախատեսված որևէ ժամկետից, սակայն բոլոր դեպքերում տվյալ հարկային տարվա ավարտից հետո՝ տասը տարուց ոչ ուշ:»:

ՀՈԴՎԱԾ 20

Կոնվենցիայի 26-րդ հոդվածը («Տեղեկատվության փոխանակում») հանել և փոխարինել հետևյալով.

«ՀՈԴՎԱԾ 26

Տեղեկատվության փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են այնպիսի տեղեկություններ, որոնք կանխատեսելի կերպով վերաբերելի կհամարվեն սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման կամ Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական միավորների կամ տեղական իշխանությունների անունից կիրառվող ցանկացած տեսակի և բնույթի հարկին վերաբերող ներպետական օրենսդրության կիրառման կամ գործադրման համար՝ այնքանով, որքանով դրանց հիման վրա հարկումը չի հակասում Կոնվենցիային: Տեղեկատվության փոխանակումը 1-ին («Ընդգրկված անձինք») և 2-րդ («Ընդգրկված հարկեր») հոդվածներով չի սահմանափակվում:

2. Պայմանավորվող պետության՝ 1-ին կետին համապատասխան ստացած ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ Պետության ներպետական օրենսդրության շրջանակում ստացած տեղեկությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, դրանց առնչությամբ իրականացվող հարկադիր գանձումներին կամ քրեական հետապնդումներին, բողոքարկումների վերաբերյալ որոշումների կայացմանը: Այդ անձինք կամ

մարմինները կարող են տեղեկությունն օգտագործել միայն այդպիսի նպատակներով: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունը դռնբաց դատական նիստերի ընթացքում կամ դատական որոշումներում: Չնայած վերոնշյալին՝ Պայմանավորվող պետության ստացած տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, եթե այլ նպատակներով այդպիսի տեղեկության օգտագործումը թույլատրվում է երկու Պայմանավորվող պետությունների օրենսդրությամբ, և տրամադրող Պետության իրավասու մարմինը թույլատրում է նման օգտագործումը:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ Պայմանավորվող պետություններին պարտավորեցնեն՝

ա) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությանը կամ վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցառումներ.

բ) ներկայացնել տեղեկություն, որը մատչելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությամբ կամ վարչարարության իրականացման սովորական պայմաններում.

գ) ներկայացնել տեղեկություն, որով կբացահայտվի որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ՝ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե Պայմանավորվող պետությունը, սույն հոդվածի համաձայն, տեղեկություններ ստանալու հարցում է ներկայացնում, մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի տեղեկություններ ձեռք բերելու իր միջոցները՝ անհրաժեշտ տեղեկություններն ստանալու համար նույնիսկ այն դեպքում, եթե այդ մյուս Պետությունն իր հարկային նպատակների համար չունի այդ տեղեկությունների անհրաժեշտությունը: Նախորդ նախադասության մեջ ընդգրկված պարտավորությունը ենթակա է 3-րդ կետում նշված սահմանափակումներին, սակայն այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն այնպես, որ թույլ տան Պայմանավորվող պետությանը մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ այդ տեղեկությունները հետաքրքրություն չեն ներկայացնում տվյալ Պետության համար:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ թույլ տան Պայմանավորվող պետությանը մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկությունները գտնվում են բանկի, այլ ֆինանսական կազմակերպության, անվանատիրոջ կամ գործակալությունում աշխատող կամ լիազորված անձի տիրապետության տակ, կամ որ դրանք վերաբերում են անձի սեփականության իրավունքին առնչվող շահերին:»:

ՀՈԴՎԱԾ 21

Կոնվենցիան լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 27Ա («Արտոնությունների իրավունք») հոդվածով.

«ՀՈԴՎԱԾ 27 Ա

Արտոնությունների իրավունք

Չնայած սույն Կոնվենցիայի մյուս դրույթներին՝ սույն Կոնվենցիայով նախատեսված արտոնությունը չի շնորհվում եկամտի կամ գույքի բաղադրիչի նկատմամբ, եթե, հաշվի առնելով բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները, ողջամտորեն կարելի է եզրակացնել, որ այդ արտոնությունն ստանալն այդ արտոնությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցրած ցանկացած պայմանավորվածության կամ գործարքի գլխավոր նպատակներից մեկն է եղել, եթե չի հաստատվում, որ այդպիսի հանգամանքներում այդ արտոնությունը շնորհելը համապատասխանում է սույն Կոնվենցիայի համապատասխան դրույթների առարկային և նպատակին:»:

ՀՈԴՎԱԾ 22

1. Կոնվենցիայի արձանագրության գործող 1-ին և 2-րդ կետերը վերահամարակալել որպես 2-րդ և 3-րդ կետեր:

2. Կոնվենցիայի արձանագրությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1-ին կետով.

«1. 1-ին հոդվածի առնչությամբ՝

ա) Չնայած սույն Կոնվենցիայի մյուս դրույթներին՝ կոլեկտիվ ներդրումային մեխանիզմը, որը ստեղծվում է մի Պայմանավորվող պետությունում և ստանում է մյուս Պայմանավորվող պետությունում առաջացող եկամուտներ, պետք է այդպիսի եկամուտների նկատմամբ Կոնվենցիան կիրառելու նպատակով դիտարկվի որպես այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձ, որտեղ այն ստեղծվել է, ինչպես նաև դիտարկվի որպես իր կողմից ստացվող եկամուտների փաստացի սեփականատեր (պայմանով, որ եթե ֆիզիկական անձը, որն առաջին նշված Պետության ռեզիդենտ է, եկամուտ ստանար համանման հանգամանքներում, ապա այդ անձը կհամարվեր այդ եկամուտների փաստացի սեփականատեր), սակայն միայն այնքանով, որքանով կոլեկտիվ ներդրումային մեխանիզմում փաստացի սեփականատերերն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտներն են, որում կոլեկտիվ ներդրումային մեխանիզմը ստեղծվել է:

բ) Սույն կետի նպատակներով՝ «կոլեկտիվ ներդրումային մեխանիզմ» տերմինը Հայաստանի դեպքում նշանակում է՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կոլեկտիվ ներդրումային ֆոնդ, իսկ Շվեյցարիայի դեպքում՝ «Կոլեկտիվ ներդրումային սխեմաների մասին» 2006 թվականի հունիսի 23-ի դաշնային օրենքի 25-րդ հոդվածով սահմանված պայմանագրային ֆոնդ և

36-րդ հոդվածով սահմանված՝ փոփոխական կապիտալով ներդրումային ընկերություն, ինչպես նաև Պայմանավորվող պետություններից որևէ մեկում ստեղծված ցանկացած այլ ներդրումային ֆոնդ, կազմակերպություն կամ միավորում, որը Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները համաձայն են սույն կետի նպատակներով դիտարկել որպես կոլեկտիվ ներդրումային մեխանիզմ:

գ) Չնայած սույն Կոնվենցիայի այլ դրույթներին՝ «Կոլեկտիվ ներդրումային սխեմաների մասին» 2006 թվականի հունիսի 23-ի դաշնային օրենքի 98-րդ հոդվածով սահմանված շվեյցարական կոլեկտիվ ներդրումային սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերությունը, որն ստանում է Հայաստանում առաջացող եկամուտներ, չի համարվում Շվեյցարիայի ռեզիդենտ, սակայն իր փաստացի տոկոսների սեփականատերերի անունից կարող է պահանջել հարկերի նվազեցում, հարկումից ազատում կամ այլ արտոնություններ, որոնք հասանելի կլինեին սույն Կոնվենցիայով այդպիսի սեփականատերերի համար, եթե նրանք նման եկամուտներ ստանային ուղղակիորեն: Այն նմանատիպ պահանջ չի կարող ներկայացնել, եթե սեփականատերն անձամբ գործընկերության ստացած եկամուտների առնչությամբ արտոնություններից օգտվելու համար անհատական դիմում է ներկայացրել:»:

3. Կոնվենցիայի արձանագրությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.

«4. 26-րդ հոդվածի առնչությամբ՝

ա) Ենթադրվում է, որ տեղեկությունների փոխանակման հարցում կարվի միայն այն դեպքում, երբ այդպիսի հարցում ներկայացնող Պայմանավորվող պետությունը սպառել է հարկման ներքին ընթացակարգով հասանելի՝ տեղեկությունների ստացման համար սովորաբար հասանելի բոլոր աղբյուրները:

բ) Ենթադրվում է, որ հարցում ներկայացնող Պետության հարկային մարմինները 26-րդ հոդվածով («Տեղեկատվության փոխանակում») սահմանված կարգով տեղեկություններ ստանալու վերաբերյալ հարցում ներկայացնելիս հարցում ստացած Պետության հարկային մարմիններին ներկայացնում են հետևյալ տեղեկությունները.

i) քննության կամ հետաքննության ենթակա անձի ինքնությունը,

ii) այն ժամանակահատվածը, որի համար հայցվում է տեղեկությունը,

iii) հայցվող տեղեկատվության վերաբերյալ տեղեկանք, այդ թվում՝ դրա բնույթը և այն ձևը, որով հարցում ներկայացնող Պետությունը ցանկանում է հարցումն ստացած Պետությունից ստանալ տեղեկությունը,

iv) հարկային այն նպատակը, որի համար հայցվում են տեղեկությունները,

v) այնքանով, որքանով հայտնի է, այն անձի անունն ու հասցեն, որը ենթադրվում է, որ տիրապետում է հայցվող տեղեկություններին:

գ) Ենթադրվում է, որ «կանխատեսելի վերաբերելիության» հանգամանքի

վերաբերյալ հղումով նախատեսվում է հարկային հարցերի մասին հնարավորինս ծավալուն տեղեկատվության փոխանակում և միևնույն ժամանակ հստակեցվում է, որ Պայմանավորվող պետությունները չեն կարող ներգրավվել տեղեկությունների անհարկի որոնումներում կամ այնպիսի տեղեկությունների վերաբերյալ հարցում կատարել, որը դժվար թե առնչվի տվյալ հարկ վճարողի հարկային հարցերին: Թեև «բ» ենթակետում ընդգրկված են այնպիսի կարևոր ընթացակարգային պահանջներ, որոնցով փորձ է արվում երաշխավորել տեղեկությունների անհարկի որոնումների բացառումը, այնուամենայնիվ, «բ» ենթակետի i-v դրույթները չպետք է մեկնաբանվեն այնպես, որ խաթարվի տեղեկատվության արդյունավետ փոխանակումը:

դ) Ենթադրվում է, որ 26-րդ հոդվածով («Տեղեկատվության փոխանակում») չի պահանջվում, որ Պայմանավորվող պետությունները տեղեկություններ փոխանակեն մեխանիկորեն կամ ինքնաբերաբար:

ե) Ենթադրվում է, որ տեղեկությունների փոխանակման դեպքում հարցում ստացած Պայմանավորվող պետությունում նախատեսված՝ հարկ վճարողների իրավունքների վերաբերյալ վարչական բնույթի ընթացակարգային կանոնները մնում են կիրառելի: Նաև ենթադրվում է, որ այս դրույթների նպատակը հարկ վճարողի համար արդար ընթացակարգ երաշխավորելն է, այլ ոչ թե տեղեկությունների փոխանակման գործընթացը կանխելը կամ անհարկի հետաձգելը:»:

ՀՈԴՎԱԾ 23

1. Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը դիվանագիտական ուղիներով մյուս Պետությանը ծանուցում է սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար իր օրենսդրությամբ պահանջվող ընթացակարգերն ավարտելու մասին:

2. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումներից վերջինն ստանալու օրը և այդ պահից գործում է՝

ա) եկամտի վճարման աղբյուրի մոտ գանձվող հարկերին վերաբերող դեպքում՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարված կամ ավանդագրված գումարների նկատմամբ,

բ) այլ հարկերի առնչությամբ՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային տարիների համար,

գ) 20-րդ հոդվածի և 22-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ՝ այն տեղեկությունների նկատմամբ, որոնք վերաբերում են Արձանագրության ուժի մեջ մտնելու օրացուցային տարվան հաջորդող տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող ֆինանսական տարիներին կամ բյուջետային տարիներին:

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ սույն Արձանագրության 7-րդ և 19-րդ

հողվածներով կատարված փոփոխությունները գործում են սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից՝ առանց հաշվի առնելու հարկային այն ժամանակահատվածը, որին վերաբերում է հարցը:

Ի վկայություն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Երևան քաղաքում 2021թ. նոյեմբերի 12-ին, երկու բնօրինակով՝ հայերեն, գերմաներեն և անգլերեն. ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են: Հայերեն և գերմաներեն տեքստերի մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

**Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝**



**Շվեյցարիայի Դաշնային
խորհրդի կողմից՝**



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2021թ. նոյեմբերի 12-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև՝ 2006 թվականի հունիսի 12-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին» կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պաշտոնակատար՝**



Վահագն Փիլիպոսյան